

«ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՆԴԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՂԵՐ»
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Մ. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1980 թ. 4-րդ համարում լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Աս. Մնացականյանի դրախտասությունը մեր կազմած «Հայ միջնադարյան պանդխտության տաղեր» ժողովածուի մասին:

Գրախոսը ցանկացել է «ցավով արձանագրել, որ սույն հրատարակությունը ունի բազմաթիվ սխալներ ու թերություններ» և իր «խնդիրն է ցույց տալ նկատված սխալներն ու վրիպումները, որպեսզի դրանք առիթ չհանդիսանան նորանոր մոլորությունների» (էջ 278):

Այս նախաբանից հետո Աս. Մնացականյանը նշում է ժողովածուի «թերությունները» և մեկ առ մեկ «քննում» դրանք: Խմբագրությունը այդ հոդվածը տպագրել է մտքերի փոխանակության կարգով: Օգտվելով այդ հնարավորությունից, մենք այս հոդվածում կփորձենք ցույց տալ, թե ինչ բնույթ ունեն Աս. Մնացականյանի այդ «քննությունները»:

Ժողովածուի առաջին թերությունը համարված է ներածություն չունենալը: Ներածության մեջ «անհրաժեշտ ուսումնասիրությամբ,— ասում է Աս. Մնացականյանը,— պիտի ներկայացվեն տարբեր ժամանակներից, տարբեր հեղինակներից անջատված և նորովի ի մի բերված պանդխտության բանաստեղծությունները: Այդ բաժնի պակասությունը տվյալ դեպքում վկայում է նաև այն մասին, որ ծանր ու պատասխանատու գործը կատարված է առանց նախնական բավարար հետազոտության» (էջ 278—279):

Սկսենք վերջին բառերից՝ «առանց նախնական բավարար հետազոտության» հայտարարությունից:

1961 թ. լույս տեսավ մեր կազմած «Հայ ժողովրդական պանդխտության երգեր» ժողովածուն: Գրքի ընդարձակ ներածության մեջ քննության էին առնված պանդխտության երգերի բովանդակությունը, դրանց արվեստը, հայ գրականության մեջ այդ թեմայի տեղն ու նշանակությունը: Ժողովածուի պատրաստման աշխատանքների և թեմայի բազմակողմանի ուսումնասիրության ընթացքում մենք հանդեպինք այն գաղափարին, որ անհրաժեշտ է կազմել նաև պանդխտության հեղինակային տաղերի ժողովածու՝ ունենալու համար երևույթի առավել ամբողջական պատկերը: Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը պլանավորեց այդ աշխատանքը, որը և բավական ուշացումով լույս տեսավ 1979 թ.: Երկրորդ ժողովածուն, լինելով առաջինի շարունակությունը՝ որպես նույն պանդխտության երևույթի գեղարվեստական արձագանք, հրատարակվեց արդեն առանց «ներածության», լոկ համառոտ առաջաբանով և ժողովածուի բնույթով ու տեքստաբանության ժամանակակից պահանջներով պայմանավորված բանասիրական ընդարձակ ծանոթագրությունների բաժնով (գրքի մեկ երրորդը), որտեղ տրված են տեղեկու-

թյուններ պանդխտության տաղերի մասին, նշված են այն աղբյուրները, որտեղից քաղված են տաղերի բնագրերը, բերված են առանձին ստեղծագործությունների և հեղինակների մասին վիճելի կարծիքները, կատարված են, ըստ անհրաժեշտության, բանասիրական ճշտումներ: Այսինքն՝ այն ամենը, ինչ ցանկանում է տեսնել գրախոսը «ներածության» մեջ:

Ժողովածուի հաջորդ թերութունը Աս. Մնացականյանը համարում է այն, որ «իսկական պանդխտության երգերի հետ ժողովածուի մեջ տեղ են գտել մոտավորապես նույնքան էլ կրոնա-այլաբանական երգեր և ներկայացվել իբրև իսկական պանդխտության մասին գրված ստեղծագործություններ» (էջ 279): Այս հայտարարությունից հետո Աս. Մնացականյանը թվարկում է այսպես կոչված կրոնա-այլաբանական ստեղծագործությունների հեղինակների անունները: Դիմելով բառարաններին, այնուհետև նաև մի քանի միջնադարյան աղբյուրների, գրախոսը հայտնում է միջնադարի մշակույթի հարցերով զբաղվող յուրաքանչյուր գիտնականի համար հայտնի այն միտքը, թե, ըստ կրոնական պատկերացումների, մարդու այսրաշխարհյան կյանքը համարվել է պանդխտություն: Այստեղից էլ գրախոսը անում է հետևություն՝ վերահիշյալ գաղափարն արտահայտող երգերը մենք իրավունք չունենք ներառնելու գրքի մեջ:

Տեսնենք, սակայն, թե թվարկված տաղերը ինչքանով են «կրոնա-այլաբանական»: Գրախոսը, բացատրելով պանդխտ բառի միջնադարյան կրոնական առումը, իր միտքը հաստատող օրինակներ է բերում Մեսրոպ Մաշտոցից և Հովհաննես Սարկավագից: Բանն այն է, որ Մաշտոցի և Սարկավագի գրվածքներում օգտագործված պանդխտ բառը իսկապես, ինչպես և անհրաժեշտ էր տվյալ կոնտեքստում, փոխաբերական իմաստով է գործածված: Նույն իմաստով, այո՛, Մկրտիչ Նաղաշն է «Տաղ վասն ղարիպի ասացեալ» տաղի վերջում գրել.

Ամէնքս ենք ղարիպ, եղբա՛րք, հայրենի մարդ իսկի շունի,
Հաւասար քնալու ենք մենք, զի այն կեանքն է մեզ հայրենի...

Բայց ահա ժողովածուից վերցված տաղերի օրինակով գրախոսի տեսական գրույթը չի հաստատվում: Գրիգոր Օշականցու «Գոչեմ, ողբամ, միշտ հառաչեմ» տեղբնատողով տաղին փոխաբերական այդ իմաստը գրախոսը պարզապես հարմարեցնում է:

Յօտար երկիր պանդխտական՝
Անձն իմ նեղեալ տագնապի, տագնապի:

Մեջբերելով այս երկու տողը, Աս. Մնացականյանը սկսում է իր վերլուծությունը. «Այսքանը, սակայն, բավական չէ ըմբռնելու այս պանդխտի էությունը: Պետք է թափանցել նրա մտաշխարհի խորքերը: Այդպես մոտենալով համոզվում ենք, որ գործ ունենք կրոնական պանդխտության գաղափարի հետ» (էջ 280):

Տեսնենք, թե ինչպես է գրախոսը «թափանցում» պանդխտի «մտաշխարհի խորքերը»: Նա, որպես հիմնավորում իր տեսակետի, հիշատակում է տաղում օրինակ բերված Քրիստոսի առակը բարի Սամարացու մասին և եզրակացնում. «Նրան ոչ ոք չի օգնում, բացի Քրիստոսի առակած բարի Սամարացուց: Այս թեման է, որ մշակել է Գրիգոր Օշականցին և ստեղծել կրոնական» 16 Հանդես, № 2

նախան երգ: «Ըղձալին», «նազելին», «սիրելին» էլ նրա մեջ՝ Քրիստոսն է: Այն ոչ մի կապ չունի հայ միջնադարյան պանդխտության տաղերի հետ և իզուր է տեղ գտել նրանց շարքում» (էջ 280):

Գիտավերլուծական այս կառույցի անհիմն լինելը կարելի է ասպարեցել տալիս ամբողջական տեքստի ցուցադրությամբ, այն ժամանակ շակերտների մեջ առնված «սիրելին», «նազելին», «ըղձալին» անմիջապես կերևան իրենց իսկական, բայց գրախոսի համար արդեն ոչ ցանկալի իմաստով: Խնայելու համար հանդեսի էջերը, տաղի մեջբերումը կկատարենք կրճատումներով.

Յօտար երկիր պանդխտական՝

Անձն իմ նեղեալ տագնապի:

Յամենայնի գոյաթափուր, ջրոյ անդամ

կարօտի,

Ո՛հ, ո՛վ փութայր առ նազելին...

Կոչէր զնա գալ առ իս, գալ առ իս:

Ինձ հաւաստի է օրինակ,

Տարաբախտիկ այրն անկեալ,

Որ իսկապէս զցաւ հէքոյս

Յառաջագոյն գուշակեալ, գուշակեալ:

Քանզի առ իս ականարկելով,

Փրկիչն Յիսուս առականալ,

Ո՛հ, ո՛վ փութայր առ բաղձալին...

Կոչէր զնա՝ գալ առ իս, գալ առ իս:

Գաղտագողի ելուզականց

Եկեալ իմ վրայ հասին,

Մերկեցին զիս և գանեցին,

Կիսամահ զիս արարին, արարին:

Ո՛չ գտաւ մի որ օգնական,

Այլ որք տեսին՝ զանց առին...

Ոչ որ է ինձ աստ մխիթար,

Խնամօղ և օգնական,

Այլ միայն Տէր իմ արարօղ

Յոյսն անմահ, վերնական, վերնական:

Որ յօրինակ Սամարացուն,

Բուժէ զցաւս իմ հոգեկան.

Ո՛հ, ո՛վ փութայր առ տենչալին...

Կոչէր զնա գալ առ, իս,

Րենական սիրով լցեալ,

Սիրելիդ իմ քաղցրագոյն,

Ջայս աղետ, իմ մինչ լուիցես,

Փութա՛ առ իս կանխագոյն, կանխագոյն:

Թեթև մինչև մեռեալ իցեմ՝

Եղէց արժան քոյգ տեսչն,

Ո՛հ, ո՛վ փութայր առ տարիալին...

Կոչէր զնա գալ առ իս...¹:

Այս տաղի ընթերցումը կարող է հանգեցնել միայն հետևյալ եզրակացության. օտար երկրում պանդխտ մարդը ամեն ինչից զրկված, անգամ ջրի կարոտ, խնդրում է, որ մեկը իմաց տա իր սիրելիին, ըղձալիին, նազելիին, բաղձալիին, տարփալիին, որպեսզի սա դա ու տեսնի պանդխտին, քանի դեռ նա չի մահացել: Այստեղ ոչ մի այլաբանություն չկա:

Այդ սիրելին Քրիստոսը չի կարող լինել, քանի որ, ըստ քրիստոնեության, Քրիստոսին տեսնելու են հանդերձալ կյանքում, իսկ այս պանդխտը իր սիրելիին սպասում է մինչև մահ: Բսկ աստված, Տերը արարող, ինչպես ասված է տաղում, Սամարացու օրինակով պանդխտի հոգեկան ցավերն է բուժել:

Անցնելով հաջորդ «կրոնա-այլաբանական» տաղի քննությանը Աս. Մնացականյանը գրում է. «Մովսես դպիր Կարնեցին, շնայած մեծ վարպետությամբ է օգտագործել այլաբանության եղանակը, բայց նա էլ կրոնական պանդխտություն է երգում» (էջ 281): Զգիտենք, թե ինչ վարպետություն նկատի ունի գրախոսը, բայց որ Կարնեցու տաղը պանդխտության «կրոնա-այլաբանական» տեսության հետ կապ չունի, կարելի է տեսնել թեկուզ նրա տոսկական ընթերցումով.

¹ Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV—XVIII դդ., էջ 66—68, այսուհետև՝ ՀՄՊՏ): Նկատենք, որ այս տաղը իբրև պանդխտության երգ բերում է նաև գրականագետ Շ. Նազարյանը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964 թ., № 4, էջ 109):

Մեկնեցայ հայրենեացն իմ աստ մնալով՝
Յօտար երկիր թափառելով, մաշելով,
Պանդուխտ և անցաւոր վշտակիր մարմնով,
Ի ընտանեաց, եղբարց, կարօտ մնալով:

Օտար աշխարհ թափառ չունիմ դադարում,
Տարաբերեալ ծփիմ նման ծովերուն,
Ահ և կասկած և վիշտք անթիվ, անպատում՝
Չանձրանալով ի օպառ մնացի կարօտով (ՀՄՊՏ, 74):

Ինչո՞ւ պետք է այստեղ այլաբանություն փնտրել, ի՞նչ այլաբանություն կա պանդուխտի այն խոսքերում, որ ընտանիքին, եղբայրներին կարոտ է մնացել՝ թողնելով նրանց և գալով օտար երկիր ու դառնալով թափառական: Ըստ կրոնական, նաև սովորական ըմբռնման, եթե հարազատները մահացել են, ապա նրանք են մեկնել թեկուզ պանդխտության այս աշխարհից: Բայց տաղում այս կյանքում ապրող պանդուխտն է հեռացել հարազատներից, որոնք այլ երկրում, հայրենիքում ապրում են և որոնց կարոտ է մնացել հայրենիքից մեկնած պանդուխտը:

Նույնպիսի կրոնա-այլաբանական պիտակով Աս. Մնացականյանը դուրս է գցում Մելքոնի տաղը: Նա անտեսում է, ինչքան էլ դա տարօրինակ թվա, միջնադարյան գրականությանը բնորոշ այնպիսի մի հատկանիշ, որ մխիթարությունն է. մխիթարել մարդուն հանդերձյալ կյանքի հույսով: Մելքոնը հուսահատ պանդուխտին հուսադրում է քրիստոնեության ուսմունքի աշխարհի ունայնության գաղափարով՝ ստեղծելով պանդխտության երգերի շարքում չափազանց յուրահատուկ մի ստեղծագործություն.

Մի՛ տրտմիր, ո՞վ դարիպ, ի մէջ աշխարհի,
Անցանի մեծութիւն մարդկային ազգի,
Ջանք արա զքեզ հանել ի մեղաց տղմի,
Ունայնութեանց զբանն Սողոմոնի (ՀՄՊՏ, 29):

Այս քառատողին կարող է ներդաշնակորեն ձայնակցել Մկրտիչ Նաղաշի «Տաղ փառն դարիպի արագեալ» տաղի վերջին տունը.

Ամէնքս ենք դարիպ, եղբա՛րք, հայրենի մարդ իսկի շունի
Հաւասար գնալու ենք մենք, զի այն կեանքն է մեզ հայրենի,
Աստէնս քեզ ճար արա, որ անտէն հոգիդ չի տանջի,
Զսուրբքն քեզ եղբայր շինէ ու զհրեշտակքն արա սիրելի (ՀՄՊՏ, 15):

Կրոնա-այլաբանական այն տեսություններ, որ զարգացնում է գրախոսը, կարելի է Զիվանու «Ձախորդ օրերն» էլ կրոնական համարել, չէ՞ որ այնտեղ էլ ասվում է՝ «աշխարհը հյուրանոց է, մարդիկ հյուր են»:

Նույն մխիթարության խոսքերն են Սիմեոն Նրեանցու «Ո՛վ պանդուխտ այր, դու սիրելի» տաղով սկսվող տաղում, որը նույնպես կրոնական է համարված.

Ո՛վ պանդուխտ այր դու սիրելի, ո՞հ, աւա՛ղ, աւա՛ղ,
Ընդէ՛ր այդպէս վարանեցեալ տրտում շրջիս, աւա՛ղ,
Եւ միշտ ի հոգոց հանելով մորմոքիս,
Եւ միշտ ի հոգոց հանելով մորմոքիս:

Բերենք երկու տուն Սահակ Վանեցու «Սաստիկ հողմուն հանդիպեցայ» տաղից.

Սաստիկ հողմուն հանդիպեցայ,
Յորժամ հնչեաց սասանեցայ,
Սակաւ մի լո՛ւր և համբերեա՛,
Բան ինչ ունիմ ասել քեզ ծո՛վ...
Ծո՛վ, ծո՛վ, զալը՛մ ծով,
Զիս իմ հրկիրն առաքեա՛ ծով:

Հարաւ յորժամ դու կու հնչես,
Հոգիս ի մարմնոյս կու քակես,
Պոնդոսի ծո՛վ, դու անյայտ ես,
Բան ինչ ունիմ ասել քեզ ծո՛վ...
Ծո՛վ, ծո՛վ... (ՀՄՊՏ, 79):

Երկու պարագային էլ նույն պանդխտ մարդու աղաչանքը ծովին, պատկերային նման համակարգ և մի տարբերություն՝ երկրորդ տաղի մեջ ծովը կոնկրետ է, Պոնդոսի ծովն է: Այս տարբերությունն է ահա պատճառ դարձել, որ գրախոս Աս. Մնացականյանը անցագիր շտա առաջին տաղին ժողովածուի մեջ մուտք գործելու: Մի՞թե գրականագիտական հարցերի քննություն ուղին սա է:

Պանդխտության տաղի սահմանման համար մենք որոշիչ ենք համարել պանդխտության վիճակի, բաժանումի և կարոտի զգացմունքների գրաված տեղը բանաստեղծության ամբողջ կառույցում: Այս հանգամանքով առաջնորդվելու պարագային (իսկ գիտականը դա է) արդեն երկրորդական է դառնում այն, թե ինչ առումով է վերցված պանդխտ հասկացությունը՝ աշխարհիկ, թե կրոնական: Երկու դեպքում էլ պանդխտ է մարդը և պանդխտի ապրումներն են արտացոլվում բանաստեղծության մեջ:

Մեր խնդիրն է եղել պանդխտության երևույթի միջնադարյան գեղարվեստական արտացոլման առավել ամբողջական պատկերի մասին ժամանակակից ընթերցողին ճաշակ տալ, որը կարծում ենք, կատարել ենք:

Պանդխտության տաղերի ժանրային տարբերակման որոշիչ պայմանների անտեսման հետևանքով, Աս. Մնացականյանը որպես ժողովածուի թերություն նշում է այն, որ այստեղ ընդգրկված են միայն XV—XVIII դդ. բանաստեղծությունները. «Պարզ երևում է, որ ժողովածուն կազմողը ճիշտ չի որոշել նաև միջնադարյան պանդխտության տաղերի ժամանակագրական սահմանները: Մինչև օրս որպես այդպիսին ճանաչված են XV—XVIII դդ.: Մ. Աբեղյանն անգամ, որ պանդխտության երգերի սկիզբը տեսնում է շատ ավելի վաղ ժամանակներում, փաստերի ի մի բերված չլինելու պատճառով Մկրտիչ Նաղաշին է համարում «առաջին անգամ» այդ թեմային անդրադարձած հեղինակ: Զմոռանանք, սակայն, որ նա անմիջապես ավելացնում է. «Պանդխտության երգերը, անշուշտ, Նաղաշից ավելի վաղ են ծագել մեղանում»:

Այժմ, երբ ծրագրվել էր ի մի խմբել հայ միջնադարյան պանդխտության տաղերը, պետք էր, որ նկատվեին և վեր հանվեին նաև վաղ ժամանակների ստեղծագործությունները» (էջ 282):

Ի հաստատումն իր գրածի՝ Աս. Մնացականյանը սկսում է տողեր մեջբերել մինչև XV դարը ստեղծված պանդխտության երգերից, նախ մի Անանուն հեղինակից, ապա մի այլ, հիշատակում է Վարդան Հայկազունին, որի «Տաղ գերեզմանական» ստեղծագործության մեջ «ուշագրավ հատվածներ կան պանդխտության մասին» (էջ 283): Սրանք, համաձայն գրախոսի, այն քործերն են, որոնք Մ. Աբեղյանը «փաստերի ի մի բերված չլինելու պատ-

ճառով» չի իմացել և դրա համար էլ Մկրտիչ Նաղաշին է համարել պանդխտության թեմային անդրադարձած առաջին հեղինակը: Իսկապես՝ այդպես է: Տեսնենք Անանուն հեղինակից կատարված այն մեջբերումը, որ Ա. Մնացականը ներկայացնում է որպես պանդխտության երգ.

Որդիք գերութեան, իմ ժողովուրդ ծնեալ յերկիր օտար,
Որ ժողովեալ էք աստ, մի՛ մոռանայք, մի՛ մոռանալք
Ըզհայրենի աշխարհ, ըզՀայաստան քարինսն,
Եկայք արտասուալք մեք ընթացուք մտալք ի նոյն...
Ի մեծն Եփրատ... (էջ 283):

Ա. Չոպանյանը իր «Հայ էջեր» ժողովածուում հրատարակում է սույն տաղը և ներածության մեջ նշում. «Կտորը հավանորեն հորինված է Շահապասի արշավանքեն ետո, թերևս Պարսկաստան բռնի տարված հայերուն մեջ գտնվող բանաստեղծե մը»²:

Բերենք նաև Վարդան Հայկազնի «Տաղ գերեզմանական վասն փոխման երանեալ և սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի» ստեղծագործության «ուշադրավ հատվածները պանդխտության մասին»:

Արդ յամենէ նուաստաւոր	Ոչ պետական պատկաւոր:
Կացին հարկով պատրաստաւոր,	Նա ի հինիցն արգելաւոր
Տէրն պանդուխտ թափառաւոր	Զերդ յօթեան անկամաւոր.
Ի հայրենեաց անտեղաւոր:	Ու նոյն հիւանդ և խօթաւոր
Շրջէր յերկրի անփառաւոր	Չուեաց աստեացս անպարտաւոր:
Հանգիստ չունէր նմանաւոր:	Ասացին թ'է անդ զետեղաւոր
Չէր տէրունի տուն գահաւոր	Օտար հողով օտարաւոր ³ :

Ահա այս մեջբերված հատվածները, «Ողբ Եդեսիոյ» պոեմի որոշ «գողտրիկ տողեր» և Գանձարան կոչված ժողովածուների առանձին տաղերն ու գանձերը այն «փաստերն» են, որոնց «ի մի բերված չլինելու պատճառով», ըստ դրախոսի, Մ. Աբեղյանը Մկրտիչ Նաղաշին է համարել պանդխտության թեմային առաջին անգամ անդրադարձած հեղինակ ու մեզ մեզադրում է, որ մենք որդեգրել ենք Աբեղյանի այդ տեսակետը:

Մենք իրավունք չունենք չհերքելու այս, մեղմ ասած, անպատասխանատու հայտարարությունը մեծ գիտնականի հասցեին:

Մ. Աբեղյանն ասել է, որ «պանդխտության երգերը, անշուշտ Նաղաշից ավելի վաղ են ծագել մեզանում», բայց, հարգանքի խոր զգացումով փոսկան խոսքի նկատմամբ, խոսել է առկա փաստի մասին և ոչինչ, ոչինչ չի հարմարեցրել: Ե՛վ այն օրինակները, որ գրախոսը բերել է ի ցույց, և՛ ստեղծագործությունները, որ հիշատակել է հիացական որակումներով, անպայման հայտնի են եղել Մ. Աբեղյանին, թեկուզ այն պատճառով, որ տպագրված են եղել, բայց գիտնականին հանգեցրել են այն եզրակացության, որ այստեղ առկա է ոչ թե պանդխտության երևույթի գեղարվեստական արտացոլումը, այլ մի ուրիշ երևույթ, որի մասին նա գրում է. «Քաղաքական կյանքի, հին անկախության և ազատության, ժողովրդի բարեկեցության կորուստը,

2 Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԺԵ:

3 «Բաղմավեպ», 1873, էջ 270:

Ժողովրդի հայրենաթափ լինելն ու ցրվելը նախ այս են ողբում Լաստիվերտցու հետ մեծ աղետից ցնցված ու խելաթափ Բայց երկրորդ սերունդն արդեն ուշադրեցրում է. լոկ ողբը բավական չէր: Եվ ահա ծնվում է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու ձգտումը որոշ գաղափարախոսություններ, որի առաջին արտահայտիչը գրականության մեջ է Մեծիմաստ Սարկավազ Վարդապետը... նա խնդրում է, որ ատված հայ եկեղեցու ցրված մանուկներին, տրամադրված և հորդահոս արտասուքով վարատվածներին (իրենց երկրից, տեղից քշված, ցիրուցան եղածներին) ժողովի ուրախություններ և փրկի: Ցրված հայ ժողովրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք և շատ վաղ Լաստիվերտցու կրտսեր ժամանակակցի, Սարկավազ Վարդապետի ձեռով մտնում մեր ժամերգության մեջ: Այդտեղ դեռ չկա քաղաքական անկախության խնդիր, այլ միայն տառապանքից ազատվելու և Հայաստանում մնալու մի իղձ է այդ⁴: Մեջբերելով Ստեփանոս Օրբելյանի «Ողբի» հետևյալ տողերը՝

Ո՞ր էք, որդիք իմ սրբածին,
եկայք առ մալրոս ձեր նախկին,
Որպէս օրենն է զաւակին,
Տանել խնամ ձեր ծնողին,—

Մ. Աբեղյանը գրում է. «Ահա թե ինչ է քարոզում նա—վերադարձ դեպի մայր երկիրը, հոգալ սրա համար: Վերադարձ այն ամենքի, որոնք իրենց օտարական են համարել Հայոց աշխարհից դուրս և միշտ կարոտով նայել դեպի իրենց մայր երկիրը»⁵:

Ահա թե ինչքան լավ է իմացել Մ. Աբեղյանը փաստերը: Եվ իմանալով՝ պանդխտության թեմային առաջին անգամ անվրադարձաժ հեղինակ համարել է Մկրտիչ Նաղաշին, որովհետև՝ «Առաջին անգամ նրա մեջ (Նաղաշի բանաստեղծության—Մ. Մ.) գտնում ենք, պանդխտության մեծ վիշտն ու թշվառությունը պատկերացած, որ մեր ժողովրդի սրտի տխուր լարերից մեկն է եղել ամենահին ժամանակներից սկսած մինչև օրս, և որ բանաստեղծն զգացել է իր հոգու խորքով: Պանդխտության երգերը, անշուշտ, Նաղաշից ավելի վաղ են ծագել մեզանում, քանի որ նրանից առաջ դժբախտ ճակատագիրը շատ անգամ ստիպել է հայերին ոչ միայն խմբերով գաղթել՝ բռնի և հոժարակամ կտրվելով հայրենիքից, այլև ժամանակավոր կերպով դիմել օտարության՝ բնատանիքի ապրուստի ճարելու և բռնակալների հարկահանությանը քավականություն տալու համար: Պանդխտել են և Նաղաշի՝ իրեն նման մարդիկ: Դրանց՝ այդ օտար երկիր թափառողների բոլորի վիճակը շատ խղճալի է, և այդ այնպես ուժեղ կերպով պատկերացնում է մեզ բանաստեղծը իր երկու երգերի մեջ, որ նրան կարելի է համարել մեր առաջին մեծ պանդխտի երգիչը»⁶:

⁴ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1970, էջ 71: Մեջբերումները կատարված են համեմատաբար ընդարձակ հատվածներով՝ խուսափելու համար հնարավոր թյուրընկալումներից:

⁵ Նույն տեղում, էջ 267:

⁶ Նույն տեղում, էջ 475—476:

Այսպես հանգամանորեն է բացատրել Մ. Աբեղյանը, թե ինչու է Մկրտիչ Նաղաշին համարում մեր առաջին մեծ պանդխտության երգիչը: Ահա թե ինչու ժողովածուն XV—XVIII դդ. պանդխտության տաղերն է ընդգրկել: Ընդգրկել կարելի է այն, ինչ գոյություն ունի: Մինչև XV դարը ստեղծված պանդխտության տաղերից, ինչքան էլ դա ցավալի է, առայժմ մեզ ոչինչ չի հասել:

Ինչ վերաբերում է «Վայրի հառուկ մի» տողով սկսվող տաղին և «Պատմութիւն Ֆարման մանկանն» պոեմին, ապա նորից գրախոսի հայտարարություններին պիտի հակադրենք փաստերը:

«Պատմութիւն Ֆարման մանկանն» պոեմի ամենահին ընդօրինակությունները, թվով չորս, XV—XVI դդ. են, ինչպես ասում է ուսումնասիրողն ու հրատարակության պատրաստողը՝ գրականագետ Շուշանիկ Նազարյանը, և ավելացնում. «Բանասիրական տվյալները անբավարար են որոշելու համար պոեմը ստեղծվելու ստույգ ժամանակը: Մեր և արտասահմանյան գրադարաններում եղած համապատասխան ձեռագրերից ամենահինը պատկանում է XV դարին... Փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ պոեմը ստեղծված պետք է լինի XIII դարից ոչ շուտ և XV դարից ոչ ուշ»⁷:

Մենք պատճառ չենք տեսնում գիտնականին հակադրվելու, մանավանդ, որ նրա արածը հայտարարությունն չէ, այլ փաստերի տրամաբանությունից բխող եզրակացություն: Եվ քանի որ, ըստ այդ եզրակացության, պոեմը կարող էր ստեղծված լինել ինչպես XIII—XIV, այնպես էլ XV դդ., ապա սխալ չի կարելի համարել և այն, որ մենք պոեմի «Մանուկն իր ընկերօքն օր մի նստել կայր» տողով սկսվող հատվածը ընդգրկել ենք այն ժողովածուի մեջ, ուր տեղ են գտել XV—XVIII դդ. բանաստեղծությունները:

«Վայրի հառուկ մի» տողով սկսվող տաղի մասին բանասիրական մեր վեճը Աս. Մնացականյանի հետ սկսվել է քննության առարկա դարձած ժողովածուում, որտեղ և շարադրել ենք մեր եզրակացությունը: Կրկնելով այն պետք է ասենք, որ «Աս. Մնացականյանը ոչ մի հիմնավոր փաստ չունի այս տաղի ծագումը կապելու X դարի հետ, քանի որ ամենավաղ ձեռագրերին հանդիպում ենք XVI դարից... Բացի այդ, եթե «տարբերակների առատությունն է» հնության և ժողովրդականության ապացույց, ապա «Կռունկը», որ այդքան այլընթերցվածներ ու ընդօրինակություններ ունի, տարբերակներ զրեթե չունի, ինչպե՞ս է Աս. Մնացականյանը «Կռունկը» ևս ժողովրդական համարում» (ՀՄՊՏ, 173—174):

Այս և ժողովածուում իրեն ուղղված բանասիրական այլ հարցերի մասին մտածելու փոխարեն Աս. Մնացականյանը վիրավորված ինքնասիրությամբ խառնաշփոթ է ստեղծում: Առաջարկություններ է անում, որ միայն զարմանք կարող են պատճառել՝ հիմնավորման լրիվ բացակայությամբ: Որպես պանդխտության տաղ նա առաջարկում է Սայաթ-Նովայի «Ուստի՝ գուքաս, դարիք բլբլբլ» հանրահայտ սիրո երգը, այնուհետև, «Ն. Ակիյանի հրատարակած «Հինգ պանդուխտ տաղասացներ» գրքում տեղ գտած ստեղծագործություններից շատերը... ինչպե՞ս կարելի էր օրինակ տեղ շտալ Ղարիպ Մկրտչին» (էջ 284):

⁷ «Պատմութիւն Ֆարման մանկանն», Երևան, 1957, էջ 23:

Եվ ի ցույց իր ասածի իրավացիության Աս. Մնացականյանը բերում է Ղարիպ Մկրտչի տաղի վերջին երկու տներից ստեղծած քառյակը.

Ղարիպուկ եմ եկեր ես ի ձեր գեղին,
Նրեսս կու շփեմ ոտիցդ հողին...
Ղարիպ Մկրտչին զիր ետրն է գովեր,
Իւր սե աշվներն նմանի ծովեր...

Ժողովածուում Ղարիպ Մկրտչին տեղ չի տրված, ճիշտ է, որովհետև այնտեղ ոչ թե ղարիպներին, այլ ղարիպության երգելի պետք է տեղ տրվի, իսկ Ղարիպ Մկրտչի Տաղը սիրո տաղ է, շատ դեղեցիկ տաղ, որի 14 քառյակներից գոնե երկուսը պետք է կարդալ՝ համոզվելու համար, որ պանդխտության տաղ հասկացության հետ հիշյալ բանաստեղծությունը ոչ մի կապ չունի.

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Սէրն սիրով պիտի գէմ չպիտի ճորով.
Քեզ ասեմ՝ ինձ լսէ՛, կարմիր ու ճերմակ,
Ես լալով ժուռ կուգամ, դու ծիծաղելով:
Փար՝ վարդ ու մանուշակ դու անուշահոտ,
Ե՛լ կամկար քալելէն երթանք մեզի մօտ.
Դու մարդ ես ըսպաներ՝ ձեռվիդ արինոտ,
Քեզ կասեմ՝ ինձ լրսէ՛ կարմիր ու ճերմակ
Ես լալով ժուռ կուգամ, դու ծիծաղելով⁸:

Եվ որպես եզրակացություն գրախոսը հայտնում է. «Այս տողերը ցույց են տալիս, որ պանդխտության թեման ունեցել է նաև ուրախ բնույթի գողտրիկ վերարտադրություններ» (էջ 284): Աս. Մնացականյանը սխալվում է նաև այն ժամանակ, երբ ասում է. «Սիմեոն Լեհացու երրորդ հայրենը, որ վրիպել է Մ. Մկրտչյանի ուշագրությունից, նույնպես, ինչպես նկատված երկու հայրենները, տոգորված է պանդխտության տրամադրություններով» (էջ 283): Այդ երրորդ հայրենը նույնպես պանդխտության տաղ չէ: «Ուղեգրություն» մեջ իր բաղմամբով դժվարությունների նկարագրությունից հետո, Լեհացին գրում է. «...հասայ ի Պուրսա, յոյժ տրտում և տխուր, զի զայլ ինչ այնպէս չհոգայի որպէս զգրեանս: Եւ ասի զողջս ի վերա տալէհիս».

Քրիստոս տէր իմ արքայ,
Գոհութիւն քեզ միշտ յարակայ.
Դու իմ տարտիս ճարակ տրայ,
Ամէն շարէս զիս ազատեայ.
Ի այս աստնվորիս վրայ
Ես միայն անաշող գտայ.
Փորձանաց չտրի դիպա,
Ն ի ամէն բարեաց զրկեցայ:

Աւաղ թ' ինչ անեմ հիմայ,
Յայս դարիպ երկիրս որ անկայ.
Հստկէ՛ ի ի փողէ ելայ,
Եւ մարմնովս յոյժ հիւանդացայ.
Հինգ ամիս զլուխ չի կալայ,
Զոր փայտի նման փրտեցայ.
Ստեղծող իմ Սատուած գթայ,
Այս ցաւէս դու զիս փարատեայ:

⁸ Ա լ ը շ ա կ Զ ո պ ա ն յ ա ն, Հայ էջեր, էջ 19 (Աս. Մնացականյանը էջերը սխալ է նշանակել՝ 15—17 փխ. 19—20):

եւ միշտ զայն զմտաւ ածէի և խորհէի, զի մի ուխտազանց եղէց, այլ հասից ուխտիս իմոյ»⁹:

Բժախնդիր քննութեան անհրաժեշտութիւն չկա տեսնելու համար, որ ստանալորը ուղեգրութեան արձակ տողերից ըստ էութեան չի տարբերվում և բանաստեղծութեան թեկուզ միջակ մակարդակի չի հասել: Բնական էր, որ եմն, որ պանդխտութեան բանաստեղծութիւնների ժողովածուում այդ ստանալորը տեղ չունենար:

Համարյա թե նույն նկատառումով ժողովածուում չի ընդգրկվել Աշուղ Դավութեի «Աֆղանստանում գրած սրտառու չորս բերք», որի սկիզբը բերել է գրախոսը ճաշակ տալու մտադրութեամբ, իսկ հաջորդ քառյակը կբերենք մենք ավելի ամբողջական դարձնելու համար այդ ճաշակը.

Ինչուրի (Ղանդայ) արէն էկայ ու էկայ,
Հընդրստանայ մօտիկ Քաբուլ դու վկայ,
Նրտիս (դուտն փակ) վերայ բանալիք չկայ
Երաբ էս իմ կապած սիրտըս բայ կուլի¹⁰:

Աս. Մնացականյանը մեզ մեղադրում է նաև հայկական միջավայրում ստեղծված թուրքերեն երգերը ժողովածուում չընդգրկելու, դրանք «լուսթխամբ շրջանցած» լինելու համար: Ազգային գրականութեան հիմնական հատկանիշներից մեկը, եթե ոչ առաջինը, լեզուն է, այդ իսկ պատճառով միայն հայերեն բանաստեղծութիւններն ենք ընդգրկել (նաև տողերգմեջ կամ տունընդմեջ հայերեն և թուրքերեն ստեղծված երգերը) հայ միջնադարյան պանդխտութեան տաղերն ամփոփող ժողովածուում: Այդպես են վարվում և այդպես պետք է վարվել գիտական լուրջ սկզբունքներով առաջնորդվելու պարագային: Ճակատագրի բերումով բաղմաթիվ հայեր բաղմաթիվ լեզուներով են ստեղծագործել: Մենք այդ ստեղծագործութիւնները որպես հայ գրականութիւն հրատարակելու իրավունք չունենք, թեև որպես հայ ոգու արտահայտութիւններ պետք է ուսումնասիրենք: Այդ առթիվ տեղին կլինի հիշել ամերիկյան հայագրի գրող Վ. Սարոյանի ստեղծագործութիւնները: Սարոյանի բաղմաթիվ ստեղծագործութիւնների նյութը հայերի կյանքն է, նրանց ապրումները, ուրախութիւններն ու տառապանքները, բայց այդ ստեղծագործութիւնները ոչ ոք առ այսօր չի հրատարակել որպես հայ գրականութեան երկեր և որպես այդպիսին չի էլ հրատարակվի, բայց երևույթը կուսումնասիրվի¹¹:

Աս. Մնացականյանը այնուհետև անդրադառնում է «ընտրված նյութերի ներկայացման գործում տեղ գտած սխալներին ու թերութիւններին» (էջ 285): Սկսում է քննութիւնը նյութերի դասակարգումից և սկսում է փոփոխելով մեր գրածը: Ժողովածուում կա բնագրերի երկու բաժին. առաջինում տպագրված են հայտնի հեղինակների դործերը, երկրորդ բաժնում՝ անհայտ հեղինակների: Աս. Մնացականյանը կամայականորեն, իր ոճով, բաժինները վերանվա-

⁹ «Սիմեոն Լեհացոյ ուղեգրութիւն», Վիեննա. 1936, էջ 184 (ի դեպ, գրախոսը նշել է 323 էջը, որը մեր ժողովածուի 11-րդ տաղի էջն է):

¹⁰ «Հայ աշուղներ, XVII—XVIII դդ.», կազմեց Հ. Սահակյան, Երևան, 1961, էջ 359:

¹¹ Ա. Ս. Ղանալանյան, Վ. Սարոյանի ստեղծագործութեան ազգային-բանասիրական արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 43—57:

նում է «հեղինակավոր և անհեղինակ»։ Բառերի տարբեր իմաստները այստեղ ցույց տալու անհրաժեշտություն չկա, բայց մի բան պետք է ասենք. անհեղինակ տաղ չի լինում, նույնիսկ ժողովրդականը հեղինակի գործ է, մեկ, հինգ թե միլիոն հեղինակի, բայց հեղինակի գործ է։ Բնագրերը երկու բաժնով հրատարակելը գրախոսը համարում է սխալ, որովհետև, ըստ նրա, դրանով չի պահպանվում ժամանակագրական հաջորդականությունը։ Պետք է ասենք, որ ընդհակառակը, դրանով պահպանվում է ժամանակագրական հաջորդականությունը, քանի որ անհայտ հեղինակների կամայական տեղադրումը տարբեր ժամանակներում, ինչ առաջարկում է Աս. Մնացականյանը, գիտական երբեք չի կարելի համարել։ Ինչ վերաբերում է բաժինների ներքին ժամանակագրական հաջորդականության պահպանմանը, ապա նույնպես ոչ մի հակագիտական արարք մենք թույլ չենք տվել։ Եթե Սիմեոն Զուղայեցուն և Սիմեոն Լեհացուն տեղադրել ենք Վարդան Կաֆացուց, Կարապետ Դպիրից, Դավիթ Սալաձորցուց հետո, ապա այն պարզ պատճառով, որ նրանք XVII դարի բանաստեղծներ են, չնայած այն բանին, որ Լեհացու ծննդյան թվականը 1584-ն է։ Բայց կարո՞ղ է Աս. Մնացականյանն ասել, թե ո՞ր թվականին են ծնվել XVII դարի բանաստեղծներ Կարապետ Դպիրը, Դավիթ Սալաձորցին։ Մենք նաև Մկրտիչ Նաղաշին, որը ծնվել է 1493 թ., ժողովածուում տեղադրել ենք 1480 թ. ծնված Առաքել Բաղիշեցիից առաջ, որովհետև նկատի ենք ունեցել ստեղծագործական ժամանակաշրջանի նույնությունը և պանդխտության թեմայում նրա ստեղծագործությունների տեղն ու նշանակությունը։ Նման օրինակներ շատ կան գիտական գրականության մեջ, հիշենք թեկուզ «Հայ նոր գրականության պատմության» 4-րդ հատորը։ Հեղինակների կարգը հետևյալն է՝ Նար-Դոս, Վրթանես Փափազյան, Լեո, Արփիար Արփիարյան, ծննդյան թվականները համապատասխանաբար՝ 1867, 1866, 1860, 1851։

«Յորժամ ելա...» և «Գերիս ընդ որ երթամ մոլար» բառերով սկսվող տաղերի առթիվ նույնպես դիտողություններ է անում գրախոսը, բայց, նախօրոք արդեն իր համար ոճ դարձած սկզբունքով՝ փոփոխություն մտցնելով գրախոսվող նյութի մեջ։ Նա մեզ մեղադրում է առաջին տաղը անհեղինակ, իսկ երկրորդը անանուն համարելու մեջ։ Չերկարացնելու համար պիտի ասենք, որ ինչպես առաջինը, այնպես էլ երկրորդը մենք անհեղինակ ու անանուն չենք հայտարարել, այլ անհայտ հեղինակների գործեր, հեղինակների, որոնց մասին մեզ, բացի այդ տաղերին կցված անուններից, ոչինչ հայտնի չէ։

Աս. Մնացականյանը երկար դատողություններ է անում Սահակ Վանեցու կյանքի տեղումության կապակցությամբ։ Ծանոթագրության մեջ մենք գրել ենք. «Աճառյանը անձնանունների բառարանի հատոր Դ, էջ 372 գրում է՝ Սահակ Դպիր Վանեցի, տաղասաց, ունի «Տաղ յարութիւն մանկան (նահատակված 1806 թ.)»։ Ունի պանդխտության երկու տաղ՝ «Սրտաբեկեալ կամ հրերուն ես անճար» և «Սաստիկ հողմուն հանդիպեցայ» (ՀՄՊՏ, 162—163)։

Այնուհետև ցույց ենք տվել, որ առաջին տաղը պահպանված XVIII դարի № 2339 ձեռագրում, իսկ երկրորդը՝ XVIII դարի № 7051 և 1737 թ. № 597 ձեռագրերում։ Այս ծանոթագրությունը, կարծում ենք, Աս. Մնացականյանը պետք է որ կարդացած լինի։

Ինչ վերաբերում է տաղի հեղինակը «Տեղաւ Ըսպրհանա մի աբեղա» ընդունելու վարկածին, համաձայն տաղի այն օրինակի, որն ունի վերջում մի

քառյակ այս սովորով, ապա պիտի ասենք, որ Մ. Ս. Մնացականյանը տարօրինակորեն «մոռացել» է իր իսկ սկզբունքները: Ծրբ իրեն անհրաժեշտ է եղել, երևելթի մասին նա գրել է. «Մի առանձին խումբ են կազմում այն երգերը, որոնք ոչ միայն դուրկ չեն հեղինակի անունից կամ թյուրիմացաբար են վերագրվել անհատ երգիչների, այլև ուղղակի իրենց տողերի մեջ կրում են որոշակի անուններ... Հնից նման փաստ չունենք: Դա, հավանաբար, պիտի բացատրել աշուղական կուլտուրայի զարգացմամբ, երբ հին գուսաններին փոխարինեցին աշուղները, որոնք սովորություն ունեին երգերի մեջ հիշել իրենց անունները: Ուստի այդ տրագիցիայով և՛ նոր, և՛ հին երգերի որոշ նմուշների մեջ մտել են նրանց տարածողների անունները՝ սկսած XVI—XVIII դարերից»¹²: Սա, իհարկե, փաստ է, որը պետք է հարգել գրախոսը և ոչ թե մոռանալով այդ՝ Սահակ Վանեցու տաղի համար իր իսկ մերժած սկզբունքով հեղինակներ որոնել:

Ժողովածուի առաջաբանում շարադրելով հրատարակության մեր սկզբունքները, գրել ենք. «Այն տաղերը, որոնք վերջին տարիներս են հրատարակված ու կազմված են դրանց համեմատական բնագրերը... ապա աղպիսիների քննական բնագիրը չենք կազմել: Եթե այդ տաղերի վերաբերյալ նոր բանասիրական ճշգրտումներ են եղել, նշել ենք ծանոթագրություններում, միաժամանակ ցույց ենք տվել այն ձեռագրերը, որոնք նոր են տապանվել...» (ՀՄՊՏ, 6—7):

Աս. Մնացականյանը հրատարակության այս սկզբունքը սխալ է համարում, ըստ նրա «գիտական հրատարակությունների հիմքում ընկած քննական բնագրերի նպատակն է մասնագետներին տալ բնագրագիտական կարևոր տվյալներ և դրանց կապակցությամբ որքան հնարավոր է նրանց ազատել ձեռագրատների, գրադարանների ու արխիվների մեկնելու հարկադրվածություններից» (էջ 286):

Ցավով պետք է նշենք, որ դժվար է գտնել հրատարակություններ, որոնք մասնագետներին կարողանալին ազատել ձեռագրատների, գրադարանների ու արխիվների մեկնելու հարկադրվածությունից: Լավ հրատարակությունն այն է, որ, որքան հնարավոր է, ցույց է տալիս, թե որ արխիվներն ու գրադարանները պետք է գնալ: Մենք այդպես էլ վարվել ենք այս ժողովածուում, որը, ի դեպ, անթուրգիական տիպի գիտական ժողովածու է և հրատարակության նպատակն էլ մի թեմայի՝ պանդխտության երևելթի մասին եղած գրական ստեղծագործությունների մասին առավել ամբողջական տեղեկություններ տալն է:

Անհրաժեշտ ենք համարում գրախոսության հրապարակ գալու դրդապատճառի մասին այնուամենայնիվ երկու խոսք ասել: Գրախոսը ջանացել է անտեղյակ ընթերցողի վրա անշահախնդիր քննադատի տպավորություն թողնել: Ժշմարտությունը, սակայն, այն է, որ Աս. Մնացականյանը չի հանդուրժել բանասիրական և որոշ հարցերի առթիվ իր հասցեին մեր արած գիտողությունները: Բանն այն է, որ մեր գրքի ծանոթագրություններում մի քանի անգամ (տե՛ս էջ 128—129, 137—138, 142—147, 172—175) մենք վիճել ենք

¹² Ա. Ս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 36—37:

Աս. Մնացականյանի հեա, ցույց տալով, որ նրա կազմած «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուի մեջ (1956 թ.) տեղ գտած մի շարք բանաստեղծություններ ոչ թե ժողովրդական, այլ անհատական երգեր են: Այդ ճշտումները մենք կատարել ենք հենվելով միջնադարյան ձեռագրերի և այլ տվյալների վրա:

Կարծում ենք, որ գիտական շխտակությունը պահանջում էր չծածկվել օբյեկտիվության քողով, այլ խոսել նախ և առաջ մեր դիտողությունների իրավացիության կամ անտեղի լինելու մասին, և ոչ թե միջոցների մեջ տարբերություն չդնելով՝ մերժել ժողովածուն:

Անհրաժեշտության դեպքում կարող էինք պատասխանել նաև գրախոսի մյուս դիտողություններին, որոնք ավելի հիմնավորված չեն, քան նախորդները: Սակայն ներկա հոդվածի սուղ սահմանները այդ հնարավորությունը չեն տալիս:

Գրախոսության առաջին իսկ էջում Աս. Մնացականյանը գրում է: որ ժողովածուի մասին «պարբերականներում սկսել են լույս տեսնել անվերապահ դրվատանքներ» և տողատակում ծանոթագրում՝ «նկատի ունենք, օրինակ, դերասան Վ. Աբաջյանի՝ «Գրական թերթում» լույս տեսած հոդվածը (8 փետրվարի, 1980)» (էջ 278):

Ժողովածուի մասին, պիտի ասենք, լույս են տեսել երկու «դրվատանք»՝ բանասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Գրիգորյանի և բանասիրական գիտությունների թեկնածու Գևորգ Աբաջյանի գրախոսությունները: Թերևս Աս. Մնացականյանը պատահամբ չի հիշել Գ. Գրիգորյանի անունը, բայց ինչպե՞ս է բանասիրական գիտությունների թեկնածու, գիտական և գրական հասարակականությանը քառորդ դարից ավելի հայտնի Գևորգ Աբաջյանին շփոթել Հայկական ՍՍՀ մաստաճավոր դերասան (և ոչ թե դերասան) Վլադիմիր Աբաջյանի հետ: Այստեղ ուղղակի գրախոսողն ուզում է թյուր տպավորություն ստեղծել, թե ժողովածուի մասին գրվածական խոսք գրողները հարցի մասնագետներ չեն եղել:

Որպես եզրակացություն ասենք, որ Աս. Մնացականյանի գրախոսությունը կառուցված է խիստ միճմիկ սկզբունքների և գրականագիտական սխալ պատկերացումների վրա:

ПО ПОВОДУ РЕЦЕНЗИИ НА СБОРНИК «СРЕДНЕВЕКОВЫЕ АРМЯНСКИЕ СТРАННИЧЕСКИЕ ПЕСНИ»

М. С. МКРТЧЯН

(Резюме)

Статья является ответом на рецензию Ас. Мнацаканяна («Историко-филологический журнал», 1980, № 4), посвященную сборнику «Средневековые армянские страннические песни» (XV—XVIII вв.). Возражая рецензенту, составитель сборника защищает филологическую обоснованность своей работы. Одновременно утверждается, что рецензия Ас. Мнацаканяна построена на весьма спорных принципах и на произвольном объяснении историко-литературных фактов.